

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՕՍՄԱՆԵՐԵՆ ԵՐԿԼԵԶՈՒ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
(ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԱԲԱՏԱՌ ԶԵՌԱԳՐԱՖՈՆԴԻ ՈՒՇ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՕՍՄԱՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ)

Բանալի բառեր – պարսկերեն-օսմաներեն բառարաններ, *Ֆարհանգ*, *ձեռագիր*, *կրթական գործիք*, *Մատենադարան*, «*Լուդաթ-ի Նի՛մաթուլլահ*», «*Դակայեկ ալ-հակայեկ*», «*Թուհֆե-յի Շահիդի*», «*Թուհֆե-յի Վեհբի*»

Միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանները¹ (*Ֆարհանգները*) երևան են եկել մշակութային ու ուսումնական նպատակներով և եղել են ուսումնական-կրթական, թարգմանական-բացատրական բնույթի երկեր: *Ֆարհանգները* գրվել են XIII-XIV դարերից սկսած և միտված էին Օսմանյան կայսրությունում ուսուցանելու պարսկերեն և այդ լեզվի հասկապես այն քերականական կարգերը, որոնք կիրարկելի էին նաև օսմաներենի քերականության համար: Այս երկերը միջնադարյան կրթական համակարգում յուրահատուկ գործիքներ էին, որոնցով ոչ միայն ուսուցանվել է պարսկերենը, այլև օսմաներենում արմատավորված պարսկերեն ու դրա միջոցով օսմաներեն մուտք գործած արաբերեն բառապաշարը: *Ֆարհանգների* միջոցով, մասնավորապես այն աշխատությունների, որոնք ներառում էին նաև քերականական մաս, սկիզբ դրվեց թուրքերեն քերականական եզրույթների ստեղծման ու մասամբ գիտական լեզվի առաջացման գործընթացին:

Պարսկերենի իմացությունը եղել է թուրքական միջնադարյան կրթության ու գրագիտության անբաժանելի և, նույնիսկ կարելի է ասել, պարտադիր նախապայմանը: Հին անատոլիական թուրքերենը պարսկերենի ազդեցությամբ տարրական շփման լեզվից վերաճեց գրական լեզվի մակարդակի: Սկսած Մամանյանների շրջանից՝ նոր պարսկերենը դարձել էր միջտարածաշրջանային շփման լեզու՝ *lingua franca*, իսլամական մշակույթն ընդգրկող մի տարածքի համար: Այն մշակութային յուրահատուկ շփման միջոց էր և շարունակվեց մինչև XIX դար: Պարսկերենի և պարսից պոեզիայի ազդեցության սկիզբը թուրքերենի և թուրքական գրականության վրա ժամանակագրորեն համընկնում է պարսից վերածննդի ժամանակաշրջանին՝ XI դար,

¹ Ուսումնասիրվող ձեռագիր-բառարաններում հեղինակները *օսմաներենը* անվանում են *թուրքերեն* (türki):

իսկ XIII դարը փոքրասիական թյուրքական պետությունների պատմության մեջ հայտնի է որպես մշակութային իրանականացման շրջան: XVI դարում օսմաներենը Օսմանյան կայսրության վարչական լեզուն էր, գրական և հայեցակարգային դրսևորման միջոցը, սակայն պարսկերենն ու պարսից պոեզիան շարունակում էին մնալ առաջատար դիրքերում: Շարունակվում և բուռն զարգացում էր ապրում պարսկերենի ուսուցման ու պարսից պոեզիայի տարածման ու արժևորման գործընթացը, որի հետ սերտորեն կապված էր պարսկերեն-թուրքերեն բառարանագրությունը: XVI-XVII դդ. Օսմանյան կայսրության տարածքում պարսկերենի իմացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. թուրք բնակչությունը շատ հաճախ չէր տիրապետում պարսկերենին կամ պարսկերեն գիտեր միայն խոսակցական մակարդակով, ուստի այն որպես գրականության լեզու անհասկանալի էր:

Երկու դեպքում անհրաժեշտ էին այնպիսի աշխատանքներ, որոնք պետք է օգնեին հասկանալ պարսից պոեզիան, խոսել ու ճիշտ գրել պարսկերենով: Այդ իսկ պատճառով *Ֆարհանգներն* օտագործվում էին *մեղրեսեներում*, նաև ձեռնարկներ էին ստեղծագործող, գիտության ու կրթության մարդկանց համար. մասնավորապես, սկսնակ պոետները պետք է տիրապետեին պարսկերենի բառային ու քերականական նրբություններին՝ պարսից պոեզիան ճիշտ ըմբռնելու և իրենց ստեղծագործություններում օգտագործելու համար: Օսմաներենում արմատավորված էր պարսկական մեծածավալ բառապաշար, բառակազմական երևույթներ, որոնք բացատրելու և հասկանալու համար անհրաժեշտ էին թուրքերենով գրվող բանասիրական աշխատություններ: Պարսկերենը այնքան էր հազեցրել օսմաներենը, որ Բ. Գ. Ֆրագները այն բնութագրել է «կառուցվածքային առումով նոր պարսկերենի դուստր լեզու»¹:

Պարսկերեն-թուրքերեն բառարանների գրչության վայրը եղել է գլխավորապես Օսմանյան կայսրությունը: Սկսած վաղ շրջանից՝ 1279 թ., երբ կազմվեց առաջին «Սըհահ ուլ-‘աջամ» («*Şihāhu’l-‘Ajam*») բառարանը², մինչև Իբրահիմ Օլգունի և Ջեմշիդ Դրահսանի պարսկերեն-թուրքերեն բառարանը («*Farhang-e fārsī-torkī*», 1967 թ.)՝ դրանց երկու երրորդը գրվել է Թուրքիայում³: Սույն հոդվածում ներկայացվող Մատենադարանի ձեռագիր երկլեզու բառարանները ևս գրվել են ներկայիս Թուրքիայի տարածքում:

¹ Sté u **Fragner B. G.**, Das Persische als Hegemonialsprache in der islamischen Geschichte: Überlegungen zur Definition eines innerislamischen Kulturraums // “Turcologica” (Turkic-Iranian Contact Areas: Historical and Linguistic Aspects”), Bd. 62, Wiesbaden, 2006, S. 47.

² Առաջին պարսկերեն-օսմաներեն բառարանը՝ արաբերենով և թուրքերենով գրված պարսկերենի քերականությանը վերաբերող հատվածով, տե՛ս **Turan F.**, Adventures of a mediaeval language book into modern times: Persistence of *Şihāhu’l-‘Ajam* in Ottoman language learning and its textual problems // “Turcology and Linguistics”, Éva Ágnes Csató Festschrift, Ankara, 2014, p. 431-441.

³ Sté u **Sāme’i H.**, Dictionaries // *EIr.*, vol. VII, fasc. III, p. 395.

Միջնադարյան երկլեզու բառարանները գրելու մեթոդաբանությունը

Միջնադարյան պարսկերեն-թուրքերեն բառարանները գրվում էին արդեն ձևավորված և հարուստ ավանդույթ ունեցող պարսից բառարանագրության սկզբունքներն օգտագործելով¹: Միջնադարյան պարսից բառարաններն ունեին մեթոդաբանական առանձնահատկություններ. դրանք ոչ միայն բացատրական, թարգմանական, հանրագիտարանային բնույթի էին, այլև հատկանունների, հոմանիշների ու հակահիշների, ինչպես նաև տաղաչափական բառարաններ էին: Մրանով են հիմնավորվում նաև *Ֆարհանգները* գրման կարևորությունն ու դրանց պահանջարկը միջնադարյան հասարակությունում. դրանք տեղեկատու և ուսումնական ձեռնարկներ էին, գրական գործերի մեկնություններ: *Ֆարհանգները*, թերևս շատ քիչ բացառությամբ, չէին բավարարվում միայն բառի բացատրությունը ներկայացնելով. անպայման տրվում էին բառօգտագործման դեպքերը գրական ստեղծագործություններում՝ մեջբերելով հատվածներ: Դրանց ներառած գեղարվեստական կտորների ամբողջությունը յուրօրինակ անթուղգիաներ են²:

Երկլեզու ուսումնական բառարանագրության մեթոդաբանության մեջ ընդունված էր նաև բացատրվող բառերը առանձնացնել ըստ խոսքիմասային պատկանելության՝ անվանական (*asāmī*) և անորոշ դերբայական (*mašādir*): Բառարանները, որոնք ընդգրկում էին թե՛ բացատրական այս բառացանկերը և թե՛ քերականական բացատրությունները, կոչվում էին համընդհանուր՝ *jāme*³:

Քերականական նյութի ընդգրկումը *Ֆարհանգներում* վկայում էր դրանց ուսումնական նշանակության մասին³: Պարսկերեն-թուրքերեն *Ֆարհանգներում* դրանք տարբեր կերպ էին ընդգրկվում՝ առանձին բաժիններով կամ բառահոդվածներում: Հեղինակները քերականական բաժնում քննարկում էին նաև արտասանական խնդիրներ՝ հնչյունների գրության ու արտասանության ձևերը: XVI դ. արդեն օսմաներեն մուտք գործած պարսկերեն և արաբերեն բառապաշարը ենթարկվում էր թուրքական արտասանական հարմարեցման՝ քմայնացման և ետնաքմայնացման⁴:

¹ Տե՛ս **Baevskii S. I. and Perry J. R.**, Early Persian Lexicography *Farhangs* of the Eleventh to the Fifteenth centuries, tr. by N. Killian, Global Oriental LTD, 2007, p. 151:

² Միջնադարյան *Ֆարհանգներում* գրական ստեղծագործությունների օրինակներով բառերի բացատրությունների հիմնավորումը ձևավորված ավանդույթ էր. օր.՝ *Sams-i Faxrī* -ն իր *Mi'yār-i Jamālī* բառարանում բառերի վկայաբերումներ տալիս է հենց իր քասիդներից, *Sihāh al-furs*-ի հեղինակը օրինակներ է բերում իր հոր ստեղծագործություններից: Բառարաններում առավել հղված պարսից դասական հեղինակներն են՝ Նիզամի, Ռուդաքի, Ֆիրդոսի, Ունսուրի, Աբու Շաքիր, Հաֆեզ, Սաադի և այլք: Տե՛ս **Baevskii S. I. and Perry J. R.**, նշվ. աշխ., էջ 127-134:

³ Քերականական նյութի ընդգրկումը պարսկական *Ֆարհանգներում* սկզբնավորվել է XI դարից: Դրա առաջին նմուշն է *Farhang-i Ja'farī*-ն (1040/1630-31 թթ.):

⁴ Տե՛ս **Stein H.**, Palatal-velar vocalism of Arabic-Persian loanwords in 16-th century Ottoman Turkish // “Turcologica”, 2006, Bd. 62, S. 144-145:

Կառուցվածքային առումով միջնադարյան բառարաններին հատուկ առաջաբանների կառուցվածքը՝ աստծուն ուղղված փառաբանությունները, *Ֆարհանգը* գրելու դրդապատճառներն ու շարժառիթները՝ ո՞վ և ինչու՞ պատվիրեց կամ առաջարկեց գրել այդ աշխատությունը, *Ֆարհանգների* ցանկը, օրինակ են դարձել տվյալ գործը գրելու համար: Որոշ դեպքերում նշվում էին նաև աշխատանքի բովանդակությանը վերաբերող հարցեր:

Ուշմիջնադարյան բառարանները գրվում էին արձակ և չափածո (nisāb): Չափածո բառարանագրությունը երկու նպատակ էր հետապնդում՝ ուսուցողական և գեղարվեստական: Դրանք գործածվում էին հիմնականում *մեղրեսեններում*՝ անգիր սերտելու միջոցով օտար բառապաշարը, չափածո խոսքի հանգավորումը սովորելու համար: Տաղաչափորեն չափածո բառարանները պոեմներ՝ *մեսնեվիներ* էին՝ բաժանված «քըթաների» ու «բահիրների» (ոտանավորի չափեր): Այս բառարանների առաջացումը պայմանավորված է եղել պարսից դասական գրականության տարածվածությամբ, որի նմուշներին, մեկնությանն ու բացատրությանն են նվիրվել չափածո բառարանները: Միջնադարյան գրքի ձևաչափը թույլ չի տվել գրքում արձանագրել այդ բացատրություններն ու մեկնաբանությունները, և այդ հանգամանքը նպաստել է կազմելու ձեռագիր-բառարանների առանձին հատորներ: Պարսկերեն-թուրքերեն նման բառարանները, որոնք բանաստեղծությունների միջոցով բացատրում և ուսուցանում են պարսկական որևէ գրական ստեղծագործության բառապաշարը և ի ցույց դնում տաղաչափական օրենքներ, արժևորվել են նաև որպես բանասիրական աշխատություններ և ունեն մեկնություններ, որոնք հայտնի են *serh* (մեկնություն) անվամբ: Այս երկերը ուսուցողական նշանակության հետ մեկտեղ ունեին գրական-գեղարվեստական մեծ արժեք և սովորաբար ընդգրկվում էին գրական ստեղծագործությունների հետ նույն ձեռագիր ժողովածուներում (*mejmu'a*):

Բառարանների ընդօրինակումների սեղմ հիշատակարանները հազեցած էին կարևոր տեղեկություններով, ինչպես են՝ գրչի, կազմողի (երբեմն նաև՝ նորոգողի) կենսագրական տվյալները, ընդօրինակման գրչության, նորոգման կամ գնման հանգամանքները, ընդօրինակումը կատարելու ժամանակին առնչվող տվյալները: Մակայն պարսկերեն-թուրքերեն բառարանների ընդօրինակումներից շատերը չունեն նման հազեցվածությամբ հիշատակարաններ, և դա բացատրվում է դրանց դասագրքային ու ուսուցողական նշանակությամբ: Հաճախ բառարաններն արտագրվել են գրագետների, *մեղրեսենների* ուսուցիչների կողմից սեփական օրինակն ունենալու և դրանով դասավանդալու համար, որոնք հարկ չեն համարել ընդօրինակման հիշատակարանում թողնել իրենց անունը: Սրանով է պայմանավորված նաև միջնադարյան երկլեզու բառարանների բազմաթիվ ընդօրինակումների առկայությունը, որոնք այսօր պահվում են նաև աշխարհի տարբեր ձեռագրաֆոնդերում:

Մատենադարանի միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանները

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում (այսուհետ՝ ՄՄ) պահվող պարսկերեն-օսմաներեն երկլեզու *Ֆարհանգները* XVI-XVIII դարերի ընդօրինակումներ են: Դրանք այս ժամանակաշրջանն արտացոլող մշակութային միջավայրի վկաներ են: Կառուցվածքային առումով արձակ ու չափածո երկեր են և հավաքված են առանձին հատորներում ու ժողովածուներում: Երկերի ընդօրինակումների լուսանցքներում սեփականատերերի կողմից արված նշումները, լրացումները, գրչափորձերը փաստում են դրանց կիրառական նշանակությունը, որն առաջին հերթին ուսումնական-կրթական է: Այդ ձեռագրերից մի քանիսը, մասնավորապես չափածոները, որոնք կարևոր են գրական, գեղարվեստական տեսակետներից, ընդօրինակվել են գեղանկարչական հարդարանքով՝ մանրանկարներով, խորաններով, կաշեպատ կազմով և ամենայն հավանականությամբ ունեցել են նաև «*առևտրային*» նշանակություն:

1. Արձակ բառարաններ

1.1 ՄՄ արաբատառ ձեռագրերի հավաքածուի հ^ա133 ձեռագիրը Նի՛միթուլլահ իբն Ահմադ իբն Ղազի Մուբարաք ալ-Ռումիի (մահ. հիջրայի 969/1561-2 թ.) պարսկերեն-թուրքերեն (գրված 947 /1540-1 թ.) հայտնի «Լուդաթ-ի Նի՛մաթուլլահ» (“*Luḡat-i Ne‘ematullah*”, «Նիմաթուլլահի բառարան») բառարանի ընդօրինակումն է¹: Այն ունի հիշատակարան, որից հայտնի է դառնում, որ գրիչը Ջաբար իբն Փիր Ահմադ ալ-Ռազ Ռումին է, իսկ ընդօրինակումը կատարվել է 1105/1693 թ.: Հիշատակարանը (էջ 237բ)²

قد تمت الكتاب بعون الله الملك الوهاب هذه العنة الشريفة نعمت الله بن احمد بن مبارك الرومي رحمة الله عليه عن يداضعف الضعيف جهابر بن پير احمد الارض رومي غفر له ولوالديه في يوم الثلاثاءى وقت العشاء و ماه جمادى الاولى لسنة خمس و مائة بعد الالف من هجرة النبوية صلى الله عليه و سلم سنة ١١٠٥ .

Ձեռագիրը 238 թերթ է²: Արձակ բառարան է՝ միասյուն գրությամբ, գրված մասի ձեռագրատեսակով: Ընդօրինակման 003բ-004բ էջերում առաջաբանն է՝ վերը նշված կառուցվածքով, որտեղ հիշվել են երկը կազմելիս օգտագործված «Օքնում-ի ‘Աջեմ» (*Oqñūm-i ‘Ajem*) (որից պատճենվել է կառուցվածքը), «Սըհահ ուլ-‘աջամ» (“*Ṣiḥāhu’l-‘Ajam*”) և Լութֆուլլահ Հալիմիի (*Luṭfullāh*

¹ Բառարանի մասին տե՛ս **Paul de Lagarde**, *Persische Studien*, Dieterische Verlags-Buchhandlung, 1884, S. 53-55; **Öz, Y.**, *Tarih boyunca Farsça-Türkçe Sözlükler*, Ankara, 2010, s. 156-160: Հնագույն ընդօրինակումներից տե՛ս *Catalogue des manuscrits persans* (Ancien fonds persan de la B. N.; par **Francis Richard**) Paris, 1989, Persan n° 195, 196, 197, 200, 205, 206; Suppl: turc 265 à 272, 561, 568 et 1347; **Flügel G.**, *Die arabischen, persischen, türkischen Handschriften, der k. u. k. Hofbibliothek zu Wien, v. 1* Georg Olms, Hildesheim-New York, 1977, S. 132, n° 128; S. 137 n° 134-5 և այլն:

² Տե՛ս **Kostikyan K.**, *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*, Yerevan, 2017, p. 69:

Ḥalīmī) ու Հասան Իբն Հուսեյն Իբն ‘Օմադ Քարահիսարիի (Hasan Ibn Huseyn Ibn ‘Omād Qarahisāri) բառարանները (004ա):

«Լուղաթ-ի Նի‘մաթուլլահ» բառարանը միջնադարյան բառարանագրության տեսակները՝ *asāmī*, *maṣādir*, ներառող աշխատություն է՝ *jāme‘*: Բացատրական հատվածը բաժանված է ըստ խոսքի մասերի և միջարկված քերականական հատվածով: 020ա - 026բ էջերում ձևաբանությանը նվիրված բաժինն է՝ «Ղա‘եդե-ի զաբան-ե ֆարսի»/«*Qā‘ede-i zabān-i fārsī*», «Պարսից լեզվի քերականություն»)՝ ուղղախոսական, բառակազմական, ձևաբանական բացատրություններով, որոնք հիմնավորվում են գեղարվեստական գրականությունից չափածո օրինակներով: Բառերի դասավորությունն ըստ հաջորդող ձայնավորի է՝ երկար *u*, կարճ *u*, *ē*, *o*՝ առանձնացված ենթավերնագրերով:

1.2 ՄՄ արաբատառ ձեռագրերի հավաքածուի հ^տ196 ձեռագիր-ժողովածուն ընդգրկում է Քեմալ Փաշազադեի (մահ. 1533 թ.) երկու աշխատությունները՝ օսմաներեն «Ռեսալե-ի Յա-յի ֆի լիսան ալ-ֆարսի» (“*Risāle-i yā-yi fi lisān al-fārsi*” «Տրակտատ պարսկերենի յա-ի մասին») և «Դակայեկ ալ-հակայեկ» (“*Daqāiq al-ḥaqāiq*”, «Ճշմարտության մանրամասները») գլոսարիան¹: Առաջին երկը բառարանային բնույթի չէ, սակայն նվիրված է պարսկերենի -ի բառակազմական ձևային քննությանը և փաստորեն իր նյութով փաստում է XVI դարում պարսկերենի և դրա ուսուցման ու ուսումնասիրման կարևորությունը:

«Դակայեկ ալ-հակայեկ» գլոսարիան ընդգրկված է ժողովածուի 027ա – 174ա էջերում: 174 ա էջում հիշատակարանն է՝

٩٧٢ هـ

որից պարզ է դառնում, որ բանասիրական այդ երկը ընդօրինակվել է 1564/5 թ., սակայն ընդօրինակողի անունը չի նշվում:

«Դակայեկ ալ-հակայեկը» պարսկերեն հոմանիշ և նույնանուն բառերի գլոսարիա է՝ օսմաներեն բացատրություններով և հիմնավորված պարսից դասական գրականությունից մեջբերված բեյթերով, քրթաներով՝ Ֆիրդուսի, Սաադի, Հաֆեզ, Նիզամի և այլք²: Իր տեսակով այն համապատասխանում է հայ բառարանագրության մեջ «Բառք գովասականք» բառարանատեսակներին, որոնք քննել են գովասանական բառեր ու դարձվածներ՝ քաղված ճարտասանական, քերթողական ու խոսքի բարձրարվեստ երկերից: «Դակայեկ ալ-հակայեկը» բաղկացած է հազեցած բառահոդվածներից, որտեղ քննարկվող բառերի հետ զուգահեռ անդրադարձ կա դրանց ածանցավոր ու բարդ ձևերին, բառակազմական առանձնահատկություններին, բերված գեղար-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 87-88: Բառարանի ընդօրինակումներից տե՛ս **Flügel G.**, նշվ. աշխ., էջ 130-132, n° 127, n° 128, **Rieu Ch.**, Catalogue of Persian Manuscripts in British Museum, Vol. II, publ. by the Trustees of the British Museum, 1966, p. 514ab (Add.7887), **Дмитриева Л. В.**, Каталог тюркских рукописей Института Востоковедения Российской Академии Наук, М., 2002, № 846, с. 229 և այլն:

² Տե՛ս **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 37-38; **Öz** 2010, նշվ. աշխ., էջ 148-153:

վեստական հատվածում հանդիպող այլ միավորների և այլն: Առանձին բառահոդվածներում քննարկվում են, օրինակ, պարսկերեն՝ *bozorgdašt li donid* «ողջույն», *nīk o nīkū* «լավ, բարի», *angešt li axgar li ātaš li āzar* «կայծ, կրակ», *deh li dehqān li kand li rustā* «գյուղ, բնակավայր», *xāme li kelk* «գրիչ», *abraš* «խալերով ձի» և *šabdīz* «սևաթույր ձի» և այլ բառամիավորներ, մոտ 400 բառ:

Այս աշխատության բնույթն ու կառուցվածքը վկայում են, որ այն կատարել է ուսումնական ձեռնարկի դեր, գործածվել է *մեղրեսեներում* և սկսնակ բանաստեղծների կողմից, որոնք ուսումնասիրել են պարսից պոեզիան և դրա նրբությունները իրենց ստեղծագործական գործընթացում:

Գլոսարիան հրատարակված չէ՝ չնայած ձեռագրերի բազմաթիվությանը, սակայն դրա տրամադրած նյութը աղբյուրագիտական ու պատմական նշանակություն ունի պարսկերեն և թուրքերեն բառագիտության ոլորտում (գլոսարիայի գիտական ուսումնասիրությունը՝ հիմնված այս ընդօրինակման նյութի վրա, ընթացքի մեջ է):

2. Չափածո բառարաններ

2.1 «Թուհֆե-յի Շահիդի» («*Tuhfe-i Šahidi*» «*Շահիդի ընծան*») պարսկերեն-օսմաներեն բառարանը (921 թ./1514 թ.), որը Ջալալ ադ-դին Մուհամմադ Բալխիի (XIII դար) «*Մասնավիյե մա'նավի*» ստեղծագործության բառապաշարն ընդգրկող երկ է, թուրքագիտության մեջ թերևս ամենաշատ ուսումնասիրված և պատճենված աշխատանքներից է¹: Այն ընդգրկված է ՄՄ արաբատառ ձեռագրերի ֆոնդի երկու ժողովածուների՝ հ^մ 741, հ^մ 937 և մեկ հատորի՝ հ^մ325 մեջ²: Հ^մ741 եռալեզու՝ պարսկերեն-թուրքերեն-արաբերեն ձեռագիր ժողովածուի 108բ – 127ա էջերը զբաղեցնում է «Թուհֆե-յի Շահիդի» բառարանը՝ բաղկացած 22 քրթաներից: Ժողովածուն կազմվել է 1196-7 թ./1781-2 թ. Անկարայում, գրիչը Մուհամմադ ալ-Մա'րաշին է: Հ^մ937 ժողովածուն, ըստ հիշատակարանի (047բ), գրվել է ավելի շուտ՝ 1033 թ./1623-4 թ., գրիչն է Ամիդ ալ-Հուսեյնը: Այս ձեռագիր-ժողովածուում գրիչը Ֆարիդ ադ-դին Աթթարի «Փանդնամ» ստեղծագործությունից հետո՝ 027բ – 047ա էջերում, զետեղել է բառարանը՝ բաղկացած 21 քրթայից: Հիշագրերը հուշում են, որ ձեռագրում կան հավելյալ բեյթեր՝ *almalhaq*: Ընդօրինակումն առանձնանում է աշխատան-

¹ Տե՛ս **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 8-9; 29-30, **Kılıç A.**, Türkçe-Farsça Manzum Sözlüklerden Tuhfe-i Şahidi (Metin) // “Turkish Studies International Periodical For the Languages”, “Literature and History of Turkish or Turkic”, vol. 2/4, Fall 2007, s. 516-548: Բազմաթիվ ընդօրինակումներից տե՛ս **Flügel G.**, նշվ. աշխ., էջ 135, n° 131, S. 136, n° 132: Տե՛ս նաև **Rieu Ch.**, նշվ. աշխ., էջ 513b-514a (Harl. 5494) և այլն:

² ՄՄ-ում պահվող հ^մ937, 741, 55, 983 ընդօրինակումների մասին տե՛ս **Ավետիսյան Ա.**, Մատենադարանի պարսկերեն-թուրքերեն բառարանները // Հայագիտական և իրանագիտական երկրորդ միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 148-167:

քային տեսքով. լուսանցքներում հավելված են պակասավոր բեյթերը, տրված են բացատրություններ ու մեկնաբանություններ, որոնց վերջում, ըստ ամենայնի, հավելողի անունն է (?): «Թուհֆե-յի Շահիդի» բառարանի ամբողջական ընդօրինակումն է հ^մ325 ձեռագիրը, որի գրիչն է Մուսթաֆա Նաթիֆը: Բաղկացած է 24 թերթից՝ գրված նասիխ ձեռագրատեսակով: Ձեռագրի գեղարվեստական ձևավորումը վկայում է, որ այն ունեցել է գեղագիտական նշանակություն, գուցե նաև՝ «սոնետրային» նպատակ: Ձեռագիրն ունի առավել լիակատար տեսք՝ նախաբան, 27 քրթա, *աբջադուլ*/հաշվարկված թվական¹:

2.2 Պարսկերեն-օսմաներեն մյուս չափածո բառարանը, որը պահվում է Երևանի Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում, XVIII դ. գրված «Թուհֆե-յի Վեհբի» («Tuhfe-i Vehbi», «Վեհբիի ընծան») բառարանն է²: Այն ներառված է հ^մ55 ձեռագիր ժողովածուի մեջ, իսկ հ^մ 983-ն առանձին ընդօրինակում է³:

Հ^մ55 ձեռագիր ժողովածուում (073բ-096ա էջերում) բառարանը գետեղված է XVII դարի իրանցի բանաստեղծ Սաիբ Թաբրիզիի դիվանից հետո: Բառարանն ունի 57 քրթա, 201 բեյթանոց մեկ մասնավի և 5 բեյթանոց *թարիհ*, ըստ որի՝ հեղինակը այն գրել է 1196/1781-2 թ.: Հայտնի է հ^մ55 ժողովածուի գրիչի անունը՝ Մայիդ Մուհամմեդ Լաթիֆի (096ա), սակայն ընդօրինակման ժամանակը տրված չէ: Մյուս ընդօրինակումը հ^մ 983 առանձին հատորն է, որն ունի 57 քրթա: Ժամանակի և գրչի մասին տեղեկություն չկա:

Կարելի է հավաստել, որ XVIII դարում գրված այս բառարանով ավարտվում է պարսկերեն-օսմաներեն երկլեզու միջնադարյան չափածո բառարանագրության պատմությունը:

Միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանների նյութի քննությունը և ժամանակի լեզվական փոխառնչությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ պարսկերենը բավականին մեծ ազդեցություն ուներ օսմաներենի վրա պարսկական բազմաթիվ միավորներ ու նաև դրա միջոցով միջնորդավորված արաբերեն բառեր մուտք էին գործել թուրքերեն և դարձել դրա բառապաշարի մի մասը: Այս բառարաններն ու բանասիրական բնույթի աշխատությունները ուղղված էին պարսկերենի, պարսից պոեզիայի և օսմաներենի պարսկական բառաշերտի ուսումնասիրմանն ու յուրացմանը: Մատենադարանում պահվող ձեռագիր բառարանները այս ոլորտն ուսումնասիրելու աղբյուրագիտական նյութ են ապահովում:

¹ Տե՛ս նկարագրությունները **Kostikyan K.**, նշվ. աշխ., հ^մ 741-էջ 237, հ^մ 937-էջ 243, հ^մ 325-էջ 134-135:

² Այս բառարանի մասին տե՛ս նաև՝ **Kılıç A.**, Türkçe-Farsça Manzum Sözlüklerden Tuhfe-i Vehbi (Metin) // Turkish Studies International Periodical For the Languages, “Literature and History of Turkish or Turkic”, vol. 2/2, Spring 2007, s. 410-475; **Öz Y.**, Tuhfe-i Vehbi Şerhleri // İlmî Araştırmalar S. 5, İstanbul 1997, s. 219-232; **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 33: Ընդօրինակումները տե՛ս **Flügel G.**, նշվ աշխ., էջ 143-44, n° 141; **Rieu Ch.**, նշվ. աշխ., էջ 515b (Add. 7687):

³ Տե՛ս նկարագրությունները **Kostikyan K.**, նշվ. աշխ., հ^մ 55-էջ 30-31, հ^մ 983-էջ 249:

Асмик Киракосян, Ани Саркисян – *Средневековые двуязычные персидско-османские словари как инструменты образования (на основе персидско-османских словарей рукописного арабоязычного фонда Матенадарана)*

Средневековые двуязычные персидско-османские рукописные словари – памятники, имеющие важное историко-культурное значение. Они представляют значительную ценность с точки зрения изучения истории сферы образования и школы, учебной литературы, научных принципов и восприятия времени, связи персидского и турецкого языков, культурных связей персидского и турецкого народов. Словари отражают картину образовательных и научных исследований того времени, методологии, языковых изменений. Представленные словари и филологические труды, копии которых находятся в арабоязычном фонде Ереванского Матенадарана им. М. Маштоца, выполняли функцию средневекового учебника по изучению персидского языка и литературы. Они обобщают такие исторические и культурные реалии, которые не сохранились в других источниковедческих работах. Данные работы – источники, представляющие сферы средневекового естествознания и образования.

Hasmik Kirakosyan, Ani Sargsyan – *Medieval Persian-Ottoman Bilingual Dictionaries as Educational Tools (According to Persian-Ottoman Dictionaries of Matenadaran's Arabic Script Codices)*

The Medieval Bilingual Persian-Ottoman dictionaries are considered to be monuments of historical and cultural importance. They are of considerable value in terms of school education, academic literature, scientific principles and perceptions of the period, as well as in the sphere of research of historical and cultural ties between the two nations and the two languages. The dictionaries reflect the image of educational and scientific research of the period, methodology and changes in the language structure. The analysed dictionaries and philological works which are kept in the Depository of the Arabic Script codices in the Institute of Ancient Manuscripts – the Matenadaran, are of great importance and function as medieval textbooks for the study of the Persian and Turkish languages and literature. They summarize historical, cultural realia which are not preserved in other sources and are considered to be sources of medieval lexicology and education.